ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

«ELECTRO POWER
SYSTEMS OPERATOR»

CLOSED JOINT- STOCK COMPANY

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0009, ԱԲՈՎՅԱՆ 27, Հեռ.՝(+37410) 524725, Ֆաքս՝ (+37410) 547317, Էլ. փոստ՝ office@energyoperator.am
27 ABOVYAN str., 0009 YEREVAN, RA Tel.: (+37410) 524725, Fax: (+37410) 547317, E-mail: office@energyoperator.am

№ 01/-ՊՀ-12/614

«08» 10 2024 թ./y.

«Կապիտալ գրուպ» ՍՊԸ Հայաստանյան
մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 05549561)
տնօրեն տիկին Սվետլանա Կովալենկոյին
(հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք.Արթիկ,
Ղարիբջանյան փողոց, 39 տուն
E-mail: kapital.group.construction@gmail.com)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

N ԷԷՀՕ-ԳՀԱՇՁԲ-07/08-24 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Կովալենկո,

Հայտնում եմ Ձեզ, որ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության և «Կապիտալ գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի միջև 2024 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված N ԷԷՀՕ-ԳՀԱՇՁԲ-07/08-24 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.3 կետի համաձայն՝ «Կապիտալ գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը պարտավոր էր Պայմանագրի գնման

առարկա հանդիսացող աշխատանքները ավարտեր 2024 թվականի հոկտեմբերի 7-ին, սակայն աշխատանքները սահմանված ժամկետում չեն կատարվել:

Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները. եթե.

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերությունների կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապալառուի կողմից վերոնշյալ աշխատանքներ չիրականացնելը համարում է Պայմանագրով սահմանված պարտավորության խախտում, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերությունը 2024 թվականի հոկտեմբերի 8-ից միակողմանի լուծում է N ԷԷՀՕ-ԳՀԱՇՁԲ-07/08-24 ծածկագրով գնման պայմանագիրը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի և Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

Տեղեկացնում եմ, որ «Կապիտալ գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը պարտավոր է պատշաճ ծանուցվելուց հետո 10 /տասը/ օրացուցային օրվա ընթացքում «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության 2474600497000000 հաշվեհամարին վճարել ՈԷԷՀՕ-ԳՀԱՇՁԲ-07/08-24 ծածկագրով գնման պայմանագրի որակավորման ապահովումը՝ 473,613.00 (չորս հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր տասներեք) ՀՀ դրամի գումարի չափով և պայմանագրի ապահովումը՝ 315,742.00 (երեք հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ գումարի չափով:

Վերը նշված պարտավորությունը չկատարելու դեպքում Պատվիրատուի ղեկավարի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը լիազոր մարմին կներկայացվի «Կապիտալ գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղին գնման գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի ա) ենթակետի:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրենի
պարտականությունները կատարող Դավիթ Գրիգորյան

Կատարող՝ Մարիա Հարությունյան
Հեռ.՝ 077 870378